Մրցույթ՝ Երևանի «Ա. Պուշկինի անվան թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ի «Հայոց պատմություն» (3 դասաժամ հայերենով ուսուցմամբ դասարանում, 3 դասաժամ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում), «Հայոց եկեղեցու պատմություն» (1,5 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանում), «Հասարակագիտություն» (6 դասաժամ հայերենով ուսուցմամբ դասարաններում, 3 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում), «Իմ հայրենիքը» (2 դասաժամ), «Աշխարհագրություն» (6 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3 × 4 չափի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ):
- Անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում
- Ինքնակենսագրություն
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ – ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. սեպտեմբերի 28-ից մինչև 2023թ. հոկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. հոկտեմբերի 18-ին՝ ժամը 14:30,** Երևանի Ա.Պուշկինի անվ.հ. 8 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Մոսկովյան 17:

Տեղեկությունների համար զանգահարել 010 564931 հեռախոսահամարով: